ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

idcarmenia@gmail.com

http://www.foi.am/hy/IDC/

31.05.2023

ԿԱՐԾԻՔ

«Ինֆոքոմ» լրատվական կայքն ընդդեմ ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի

Փաստերը

2023 թվականի մայիսի 10-ին infocom.am լրատվական կայքի լրագրող Մկրտիչ Կարապետյանը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել է ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Հակակոռուպցիոն դատարանի նախագահ Խաչիկ Ղազարյանի ընտանիքի անդամ Արմինե Հարությունի Պետրոսյանը ինչո՞ւ 2021-ին չի ներկայացրել համապատասխան հայտարարագիր։
2. Ի՞նչ գործողություններ է ձեռնարկել ԿԿՀ-ն Պետրոսյանի հայտարարագրի առկայությունն ապահովելու համար։
3. Արդյո՞ք ծանուցվել է Պետրոսյանը նման պարտականության վերաբերյալ, և ի՞նչ արձագանք է եղել։

Հաջորդ օրը՝ մայիսի 11-ին, Հանձնաժողովի պաշտոնական կայքի «Նորություններ» բաժնում տեղադրվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ուղղված հարցմանն ի պատասխան» վերտառությամբ հրապարակում հետևյալի մասին. «*Հաշվի առնելով «Ինֆորմացիոն կոմիտե» տեղեկատվական ՀԿ infocom.am լրատվական կայքի և նույն լրատվական կայքի լրագրող Մկրտիչ Կարապետյանի կրկնվող վարքագիծը, այն է՝ ներկայացված փաստերը վերարտադրվում են դրանք խեղաթյուրելով, մոլորեցնելով ընթերցողին, ձևավորելով պատրանք հաղորդվող տեղեկատվության անաչառության, ճշգրտության վերաբերյալ, այսուհետ նույն լրատվական կայքից և վերջինիս լրագրողներից ստացվող հարցումներին պատասխան տրվելու է բացառապես հրապարակային կարգով»:*

Այնուհետև Հանձնաժողովը իր պաշտոնական կայքում հրապարակել է լրագրող Մկրտիչ Կարապետյանի տեղեկություն ստանալու վերոնշյալ հարցումը և Հանձնաժողովի պաշտոնական պատասխանը, որում մեկ անգամ ևս նշվել է, որ այսուհետ լրագրողի հարցումների պատասխանները տրվելու են ***բացառապես հրապարակային կարգով:***

Ս. թ. մայիսի 23-ին Հանձնաժողովի կայքում հրապարակվել է մայիսի 12-ին լրատվամիջոցից ստացած հաջորդ հարցումը և Հանձնաժողովի պաշտոնական պատասխանը:

Infocom.am լրատվական կայքի խմբագրությունը դիմել է Տեղեկատվական վեճերի խորհրդին՝ խնդրելով տրամադրել փորձագիտական կարծիք, թե արդյո՞ք լրագրողի տեղեկություն ստանալու հարցումներին հրապարակային եղանակով պատասխանելը, լրագրողից առաջ եւ առանց նրա համաձայնության նրա հեղինակային աշխատանքի մաս համարվող գրավոր հարցման և դրան տրված պաշտոնական պատասխանի հրապարակումը չի հանգեցրել լրագրողի հեղինակային իրավունքի և տեղեկություն ստանալու իրավունքի խախտման:

Նշենք նաև, որ լրատվամիջոցի և Հանձնաժողովի միջև առկա է մեկ այլ տեղեկատվական վեճ: Հանձնաժողովը ս.թ. մայիսի 10-ին դիմել էր խմբագրությանը՝ պահանջելով հերքում և պատասխանի հրապարակում մեկ այլ նյութի առիթով, ինչպես նաև ամբողջությամբ հեռացնել մայիսի 6-ին կայքում հրապարակված «ԿԿՀ նախագահի ընտանիքի անդամները երկու տարի հայտարարագիր չեն ներկայացրել. վարույթ չի նախաձեռնվել» վերնագրով հոդվածը: Լրատվամիջոցը մերժել է Հանձնաժողովի պահանջը:

Եզրահանգում

Խորհուրդն անհրաժեշտ է համարում անդրադառնալ մի քանի կարևոր հանգամանքի: Նախ՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանելու այնպիսի կարգ, երբ պետական մարմինը դիմողին գրավոր պատասխան ուղարկելու փոխարեն այն հարցման հետ մեկտեղ հրապարակում է իր պաշտոնական կայքում: Տվյալ դեպքում, փաստորեն, պահանջվող տեղեկությունը տրամադրվել է օրենսդրությամբ **չնախատեսված կարգով՝** «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի խախտմամբ: Այս գործողությամբ խախտվել է նաև Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին Կոնվենցիան, որը վավերացվել է Հայաստանի Հանրապետության կողմից և ուժի մեջ է մտել 2022 թվականի մարտի 22-ին:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածից բխում է, որ պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, այսինքն Հանձնաժողովը գործել է կամայականորեն և չի առաջնորդվել օրենքով:

Երկրորդ. օրենքի գերակայության սկզբունքից բխում է, որ հանրային մարմինները պարտավոր են պատճառաբանել իրենց որոշումները՝ որպես նվազագույն պահանջ առնվազն վկայակոչելով օրենսդրական նորմը, որի վրա հիմնվել են: Դա կարևոր է, որպեսզի հնարավոր լինի վերահսկել, թե արդյո՞ք պետական կառույցները գործել են օրենքով սահմանված իրենց լիազորությունների շրջանակում: Լրագրողի հարցմանն օրենքով ***չսահմանված կարգով*** պատասխանելիս Հանձնաժողովն առաջնորդվել է ենթադրությամբ, դեռեւս գոյություն չունեցող հոդվածում լրագրողական բարեխղճության իր սուբյեկտիվ գնահատմամբ, այլ ոչ թե իրավական նորմով:

Երրորդ. Խորհուրդը վիճելի է համարում հարցման տեքստի հրապարակումը Հանձնաժողովի կայքում՝ լրագրողից առաջ և առանց նրա նախնական համաձայնության: Թեև հարցման տեքստի նկատմամբ լրագրողի հեղինակային իրավունքի տարածման հանգամանքը միանշանակ չէ, և հարցման՝ որպես հեղինակային իրավունքի օբյեկտ լինել-չլինելու վերաբերյալ առկա են տարբեր իրավաբանական մեկնաբանություններ, այնուամենայնիվ, մի բան հստակ է, որ առանց խմբագրության հետ համաձայնեցնելու վերջինիս ուղարկած գրավոր հարցման և դրա պատասխանի հրապարակումը պետական մարմնի պաշտոնական կայքում լրագրողին և լրատվամիջոցին զրկել է հայցվող տեղեկատվության հիման վրա առաջինը (էքսկլյուզիվ) նյութ պատրաստելու և հրապարակելու հնարավորությունից, ինչի հետևանքով խաթարվել է ստեղծագործական պրոցեսը:

Չորրորդ. Խորհուրդը խիստ վիճելի է համարում հարցման տեքստի հետ մեկտեղ լրագրողին նույնականացնող անձնական տվյալների (լրագրողի անունը, ազգանունը, աշխատավայրը և Հանձնաժողովին հարցմամբ դիմելու հանգամանքը միասին վերցված) հրապարակումը ***առանց լրագրողի նախնական համաձայնության, առանց իրավական հիմքի և օրինական նպատակի,*** որը հանգեցրել է անձնական տվյալների մշակման օրինականության և համաչափության սկզբունքների խախտման («Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 4-րդ, 5-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածներ:) Բացի այդ, անձնական տվյալների եւ գործունեության հանգամանքների մասին տեղեկությունների հրապարակմամբ լրագրողի համար որոշակի ռիսկեր կարող են առաջանալ, ինչն անթույլատրելի է հատկապես լրագրողական հետաքննություն իրականացնողի նկատմամբ հնարավոր ճնշումների տեսանկյունից: Այս պայմաններում լրագրողը նաև զրկված է լինում իր իրավունքներին միջամտությունները կանխատեսելու եւ արդյունավետ պաշտպանվելու հնարավորությունից:

Եզրափակելով՝ Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը խախտում է թույլ տվել երկու հիմքով. 1) լրագրողի տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել է օրենքով չսահմանված կարգով, և 2) առանց դիմողի համաձայնության հրապարակել է նրա հարցումը։

Հանրային մարմնի գործողությունները հակասում են տեղեկատվության ազատության և անձնական տվյալների պաշտպանության ներպետական և միջազգային նորմերին։ Մասնավորապես, խախտվել են այդ իրավունքները երաշխավորող ՀՀ Սահմանադրության 34-րդ և 51-րդ հոդվածները, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ և 10-րդ հոդվածները, ինչպես նաև «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» և «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիաները։

Տեղեկատվական վեճերի խորհուրդ

Շուշան Դոյդոյան (Խորհրդի քարտուղար) - Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ

Արա Ղազարյան - «Արա Ղազարյան» իրավաբանական գրասենյակի տնօրեն

Բորիս Նավասարդյան - Երևանի մամուլի ակումբի նախագահ

Արամ Աբրահամյան - «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

Աշոտ Մելիքյան - Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Օլգա Սաֆարյան - Փաստաբան

Դավիթ Սանդուխչյան – Փաստաբան